73. ՔՈՍԻ ԻՐԵՔ ՄԸՇԿԸՆԵՐ

Թակավորի մի իրեք հատ տղա կէղնի։ Թակավորը կըխթիարնա, կը կանչե տղեկները, կասա.—Ես կմեռնիմ, օսյաթ մը կէնիմ ծեղի, կարելի ա հարստությունը խըլսի, կէրթաք մշակ կէղնիք՝ քոսա մարթու մոտ մշակ չէղնիք, իմ օսյաթն էս է։

Ժամանակ կանցնի մեշտեղ, թակավորը կմեռնի։ Թակավորը մեռնելեն՝ էտոնք քանի մը տարի ուրանց հարստութենը կուտեն, իրեք ախպերն էլ կխեղճնան։

Կասեն.—Ախպե՛ր, մենք ի՞նչ էնենք, մեր ծեռնեն քորթ չելնիր։

Մեծ ախպերը կըսե.—Ի՞նչ քորթ պիտի էնենք, հ՚ելնինք էրթանք ուրիշ էրկիր, էղնինք մշակ ու ապրինք։

Կելնան, կէրթան անծանոթ էրկիր մի, իրեք ախպեր տուն մի կքրայեն, կնստին։

Մեծ ախպեր կըսե.—Ըստեղ ղարիպ էրկիր է, ո՞ր քիտե մենք վի՛ր տղեն ենք, մշակ էղնինք, ապրինք։

Մեծ ախպեր կէրթա շուկեն կպտռտվի, կհարցուցե թե, ես մըշակ պիտ էղնիմ։ Քոսա մարթ մի կուկա, կասա.—Մշակ չը՞ս էղնիր իմ մոտ։

Տղեն կասա.—Չէ, մշակ չըմ էղնիր քու մոտ։

— Ինչի՞ իմ մոտ մշակ չըս էղնիր,—կասա Քոսեն։

Տղեն կասա.—Իմ խերը օսյաթ էրաց, օր ես քոսա մարթու մոտ մշակ չէղնիմ։

Քոսեն կթողնի կէրթա, քիչ մի կպտռտվի, շորերը կփոխա, մեկ էլ կուկա տղի առաջ.—Տղա, ի՞նչ դեխեն իս։

Տղեն կասա.—Կարիպ իմ։

Քոսեն կասա.—Մշակ չը՞ս էղնիր իմ մոտ։

Տղեն կասա.—Չէ՛։

Քոսեն կասա.—Հ՚օրի՞ն չրս էղնիր։

Տղեն կասա.—Քոսա մարթու մոտ մշակ չրմ էղնիր։

Քոսեն կթողնի, կէրթա, քիչ մի կպտռտվի, մեկ էլ կուգա, շորերը փոխած, կհարցուցա.—Տղա՛, մշակ չը՞ս էղնիր իմ մոտ։

Տղեն կմտածա, կասա՝ «Ջանըմ, էս էրկիր հ՚ըմեն քոսա են, ես պիտի էղնիմ մշակ, մեր բախտը ըսըմլա պերեց, մեր խերը օսյաթ էրաց՝ օր քոսա մարթու մոտ մշակ չէղնենք, հիմա լե էրկիր մի էկանք, օր հ՚ըմեն քոսա են»։

— Աղա,—ասաց,—կէղնիմ մշակ քու մոտ։

Քոսեն առավ տղեն, կնաց ուր տուն, ասաց.—Տղա՛, կէրթաս, քըղի պռներ իմ ընծի որնչրարութեն էնես։

Տղեն ասաց.—Աղա՛, քու որնչբարութեն ի՞նչ է։

Քոսեն ասաց.—Ես չորս խատ եղ ունիմ, էրթաս վար էնես, ցանք էնես։

Տղեն ասաց.—Շատ աղեկ, աղա, կէնեմ։

Խըլսուն հ՚ելավ, էղներ լծեց՝ տվեց տղի հ՚առեճ, ասաց.—Կնա առտ, տղա՛, կիտե՞ս, իմ շուն կուգա քու խետ, դոր օր կանավ, էն տեղ կվարես, ես քեղի խաց կճամխիմ, իմ խաց չկիսես, ամանտառտակ չճամխե՛ս, իրիկուն օր տուն կուգաս, էգներ էրթկեն մըտուցես, օր չէրեցիր, ես օր տուն էկա, քու միչքեն զոլ մի կաշի կըխանեմ։

Տղեն կառնի էղներն ու շուն կէրթա առտ, շուն կէրթա քարի վերեն կկանի, խեղճ տղեն էտ քարի վերեն կվարա չուր մի կեսօրին։ Ախչիկ կեսօրին խաց, զատ կպերա տղին։ Տղեն կմտածա՝ «Ես անոթի եմ, խացն ուտեմ չէղնիր, զատն ուտեմ, չէղնիր, իրիկուն էրթամ զոլ մի կաշի կհանա, պարին էն ա, օր անոթի էրթամ»։

Կմնա չում իրրկուն. իրրկուն էղներ կքշա, կառնի կուկա տուն։ Կտանի էղներ կ՚կապա թավչեն։ Կմնա՝ աղեն կուկա։

— Տղա՛,—կասա,—վարեցի՞ր։

Տղեն կասա.—Խա՛, աղա, շուն դոր կանավ, վարեցի։

Քոսեն կասա.—Խաց սաղ ճամխեցի՞ր։

— Խա՛, աղա,—կասա տղեն,—խաց սաղ ճամխեցի։ Աղա՛, կուզես, ախչկա մոտեն խառցուր, ախչիկն ա պերեր խաց։

Աղեն կտառնա ախչկեն, կասա.—Ախչի՛, ղո, մեր մշակ խաց

Ֆերա՞վ, զատ կերա՞վ, աման լի՞ք պերեցիր, չխո[1] տառտակ, խաց սա՞ղ պերեցիր, չխո կիսատ։

Ախչիկ կասա.—Չէ՛ ապո, աման լիք պերեցի, խացն էլ սաղ պերեցի։

Աղեն խառցուց.—Ախչի՛, ը էզներ ի՞նչ դեխով ներս առար։

Ախչիկն ասաց.—Ապո, տոնեն մշակ պերեց, ներս կապեց։

Աղեն տառցավ մշկու վերեն, ասաց.— Մշա՛կ։

Մշակն ասաց.— Հրամե՛, աղա։

Ասաց.—Տուն էզներն ի՞նչ դեխով ներս պերիր։

Ասաց.—Տոնե՛ն, աղա։

Աղեն ասաց.—Շա՞ն տղա, ես քե հ՚առաճ ասեցի էրթքեն պիտի էճուցես, տուն հ՚օրի՞ն տոնեն ներս պերեսիր։— Կխասնի տղի մեչկեն զոլ մի կաշի կխանա։ Տղեն կմեռնի։ Աղեն կմնա անմշակ։

Կելնի կէրթա շուկեն, կպտոտվի օր մշակ մի ուրին կտնե։ Կրտեսնի՝ տղե մի էն դեխեն էկավ։ Էտ տղեն էմեկելի ախպերն է։

Կասա.—Ձրս հ՚իքա՞ր իմ մոտ մշակ։

Տղեն կասա.—Աղա՛, կուկամ։

Էտ ախպերն էլ կտանի ուր տուն։ Իմալ օր էմեկել ախպոր կըլուխ կենա, էտ տղի կլուխն էմալ կհանա։ Խեղճ տղեն էլ կմեռնի։

Պստիկ ախպերը կմտածա՝ «Ջանըմ, էսքան ժամանակ իմ էրկու ախպեր կացին՝ չէկան։ Կէղնի՞ օր կացին քոսա մարթու մոտ մշակ էղան։ Ես պիտ էրթամ քոսա մարթ քտնիմ՝ մշակ էղնամ»։

Կելնի, կուկա շուկեն։ Կտեսնի քոսե մի վերուց կուկա։

Կասա.—Մշակ չըս էղնի՞ր։

Կասա.— Աղա՛, ըպա չըմ էղնի՞ր, ես զաթա մշկու հ՚ապով[2] իմ էկիր։

Աղեն կառնի տղեն, կէրթա տուն։

Կասա.—Մշա՛կ։

Տղեն կասա.—Հրամե՛, աղա։

— Կիտե՞ս իմ պան ի՛նչ ա։

Տղեն կասա.—Քու պան ի՞նչ ա, աղա՛։

Աղեն կասա.—Իմ պան ռընչբարութեն ա, չորս խատ եզ ունիմ, ֆառնես, կէրթաս լուծ կէնես, աման, քեղի պան մի կասիմ. իմ շուն դոր կանալ՝ էնտեղ կվարես, կես ավուր ախչիկ քեզի խաց ու զատ պերեց՝ աման լիք ճամխես, խացն էլ սաղ ճամխես, իրրկուն օր

---

1. Թե ոչ (Ս. Բ.)։
2. Պատճառով (Ս. Բ.)։

տուն կուկաս, էզներ էրթքեն էճուցես , օր էմլա չէնես՝ զոլ մի կաշի քու մեչքեն կխանեմ։

Տղեն կմտածա, ինքն ուրան կասա. «Իմ ախպերտիք էմլա եռ սպաներ»։

Խըլսուն, կառնի էղներ, կէրթա առտ, շուն կէրթա կանի քարի մի վերեն։ Լանկե մի կէրթա զանի շան, շուն կփախնի կէրթա կակուղ տեղ մի կնստի։ Զուրմ՝ կեսավուր կվարա։ Ախչիկ կառնի զատ ու խաց կուկա։ Տղեն կիչկա օր իրեք խաց ա, ամամ էլ ա իլին զատ ա։ Տղեն կմտածա ինքն ուրեն, կասա. «Էսա զատն ուտեմ, աման կտառտկվի, խացն էլ կիսեմ ուտեմ չէղնիր, ըպա իմա՞լ էնէմ, ես մնամ անոթի՝ լա չէղնիր»։ Կպերա աման, զատն էլա, խացերն էլ ա կտնի կետին ու կնստի վերեն։ Խացերու ուրթալախը[1] կխանա, կուտա, պուկներ սաղ կմնա. աման զատն էլ ա զըմեն կուտա, կըտառնա ախչկեն, կասա.

— Ախչիկ, քիչ մի մացիր, աման նոր տամ առ կնա։

Կպերա, ամնի մեչը կքաքնա, կուտա ախչիկ, կասա.—Ա՛ռ, կնա քու խոր։

Ախչիկ աման ու խացը կառնա, կուկա տուն։ Իրրկուն կէղնի, տղեն կառնի էզներ ու կուկա տուն։ Էզներ կխանա տանսի վերեն, կմորթա, կտոր-կտոր կէնա, էրթքեն ցածր կթալա, ինքն էլ կէրթա, կմտի տուն։ Հ՝երթ կըլցա մսուր, էղներու գլուխ կխորա մսուրի հ՝երթի մեչ։ Կնստի չուր մի իրիկուն, կիչկա աղեն տուն կուկա։

Աղեն կասա.—Մշա՛կ։

Տղեն կասա.—Հրամե՛, աղա։

Աղեն կասա.—Էս օր ի՞նչ էրեցիր։

Տղեն կասա.—Աղա՛, շուն ի՛նչ տեղ կանավ, էն տեղ վարեցի։ Ախչիկ զատ պերեց, աման լիք ճամխեցի, իրեք խաց էր խետ, էն էլ ճամխեցի, էղներն էլ էրթքեն ցածր թալեցի, էզներուն դարման տվեցի։

Տղեն կքաշա տանակ՝ զոլ մի կաշի աղի միչքեն կհանա։

Աղեն կասա ուր կնկան.— Կնի՛կ, ինչ շանորթի մշակ մեզի ռաստ էկավ, օր իմ միչկեն զոլ մի կաշի խանեց. կնա հեքմին ասա կա[2] իմ մեչկ տեղ։

Կնիկ կասա.—Ա՛յ մարթ, քոռնենք, էս ինչ կեշ մշակ ռաստ է-

---

1 Կենտրոն (Ս. Բ.)։
2 Գա (Ս. Բ.)։

ֆավ մեղի, օր քու միչկեն զոլ մի կաշի խանեց։ Մարթ, էսա մշակ դուրս չի թալե՞նք, ի՞նչ կասես։

Մարթ կասա.—Չէ՛, դուրս թալելով չընք պրծինք մոտեն։ Ես օր սաղցա փորձանք մի կպերեմ էսոր կլխուն։

Ժամանակ մի կընցնի մեչտեղ, աղեն կսաղնա։ Թրացու տուն խարսնիս կէղնի, կուկան կանչեն աղեն զլե, կնիկն զլե։ Էրկուս կէրթան խարսնիս։

Աղան կասա.—Մշա՛կ, ղռան մոյաթ էղնիս։

Տղեն կասա.—Աղեկ, աղա, ղռան մոյաթ եմ, դու գնա, մի՛ վախենար։

Աղեն ու կնիկ տուն կթողնեն տղին, կէրթան։ Աղեն չասաց, թե տան մոյաթ էղնիր, ասաց՝ դռան մոյաթ էղնիր։ Չորս սահաթ մեջ կընցնի, տղեն դուռ կքակա. կշալկա, կէրթա խարսնիս։

Աղեն կասա.—Տղա՛, ի՞նչ էրեցիր, տուն վի՞ր թողեցիր էկար։

Տղեն կասա.—Աղա՛, դու ասիր, ղռան մոյաթ էղիր, մի՛ վախենար, դուռն իմ քամակն ա, թե օր պան մը էղավ՝ իմ կլուխ կըտրա։

Աղեն ու կնիկ խարսնիս թարկ կէնեն կուկան տուն։ Կնիկ կասա.— Վա՜յ, մա՛րթ, զատ չմնացեր ա տուն, հ՝ըմեն տարած են։

Աղեն կասա.— Կնի՛կ, սեռսուփ իշկա տես, տուն պան չմնացերա, կտոր մի խաց ժողվինք, էս էրկրեն փախինք, էս տղի ծեռնեն ազատինք։

Կնիկ կասա.— Մա՛րթ, քիչ մի ալուր ա մանցեր ու քիչ մի եղ։

Մարթ կասա.—Խերիք ա, պեր արա մեղի կատա, առինք էրթանք մեր խետ ճամբախ։

Կնիկ կպերա եղն ու ալուր կշաղղա, կթխա կատա.— Մարթ,— կասա,— էսա կատեն դո՞ր լցենք։

Մարթ կասա·— Կնիկ, մեր հ՝երթի կողովն էլ դաս ա, լից մեջ, կիշեր շալկիմ ու էրթանք։

Կնիկ կատեն կթխա, կլցա կողով, կտնա տռան ետև։

Աղեն կասա.—Կնի՛կ, տղեն էմա՞լ էղավ, չէղնի կա մեր խետ։

— Մշակ փախավ, կնաց,—կասա կնիկ։

Մշակ քողտուկ կմտնա կողվի մեջ, կատեք կըլցա, չտեսնին։ Մարթ կողով կշալկա, կէրթան ուրիշ էրկիր։ Ճամբախ լե օր կէրթան, տղի շեռ կփրցի, տղեն կշռա, աղի մեշք հալա շիտակ չսաղցերա։ Կնկան կասա.

— Կնիկ, տնավեր, էս ի՞նչ էղով ա ըրեր ես էս կատեն։

Կնիկն ասաց.—Ապա, ժա՛րթ, եղ շատ էր, ալուր քիչ էր, ապա թողնի օր տղեն եղ տանե՞ր։

Քիչ մի տեղ էլ ճամբախ կէրթան, կէղի մի կմոտնան։ Կէղի շները կուկան թափին աղի վրեն ու կնկան վերեն։

Աղեն կասա.—Ա՜խ կնիկ, մկա մշակ էստեղ չէղնե՞ր օր զարկեր շներուն։

Մշակ կողվի մեշեն կելնի զինք կթալա ցած՝ կասա.— Աղա, մի՛ վախենար, էստեղն եմ։

Տղեն էլ ուրանց խետ ճամբախ կէրթան. կէրթան կարմընջի մի վերեն։

Աղեն կասա.—Տղա՛, կիշեր մնանք էսա տեղ, խրլսուն նոր կելնինք, կէրթանք։

Տղեն կասա.—Շատ աղեկ, թրղ էղնի։

Իրրկուն օր կէղնի, տղեն ճոկ կպառկի, աղեն ուր կնիկ էլ ճոկ կպառկին կարմնջի վերեն։

Աղեն կնկան կասա.—Կնի՛կ, կիշեր հ՚ելնինք էսա տղեն թալինք կետ։

Կնիկ կասա.—Մա՛րթ, ես կիշեր շուտ չեմ արթիր, կանչես ընձիկ, վախեմ տղեն էլ հ՚իմնա։

Իրիկ կասա.—Ապա էմա՞լ էնինք։

Կնիկ կասա իրկան.—Պեր թել մի, կապա մեկ կլուխն իմ ոտ, մեկ կլուխ քու ոտ, ես օր շուտ իմցա՝ ես քաշիմ դու արթիս, դու օր շուտ իմցար՝ դու քաշի ես արթիմ։

Տղեն կլսա։ Կիշեր էնոնք օր կքնին, աղի օտնեն թել կառցկա՝ աղեն կտանի պառկեցուցա ուր տեղ, ինք կուկա պառկի աղի տեղ. թել կկապա ուր ոտ։ Թել կքաշա.—Կնի՛կ, զարթիր օր զարթիր,—ուշիկ ծենով կկանչա,—կնի՛կ, կնիկ, հ՚ելիր մշակ թալենք կետ։

Տղեն ու կնիկ կելնին՝ կնիկ կպռնա աղի օտներ, տղեն կպռնա աղի կլուխ՝ կարմնջեն կթալեն ցածր, ճրի մեջ։

Տղեն կասա.—Վա՜յ խաթուն, աղեն էր, ես մացի, աղեն կնաց։

Կնիկ կասա.—Էս ի՞նչ փորձանք էր պերիր իմ վերեն։

Տղեն կասա.— Մի՛ վախենար, ես լե աղի տեղ, ես կառնեմ քեզիկ։

Էրկնուց իրեք խնծոր ինկավ. մեկն աղղին, մեկ լսողին, մեկ լե էնտեղ քտնվող ջաղամաթին։